

- 124 Յայս բան անհամ յիմարելոյն
Բաղեպ փաշայն առ գարշելոյն
Ասէր, վարձ, մեղ, Սարգսի արիւն
Ի վերա ձեր լիցի համբուն:
- 125 Զայս ասացեալ դատակրնքէր,
Եւ զզուանօք հրամայէր
Վանել զՍարգիս որ մատնեալն էր,
Ուր եւ Յակոբ կամեցեալն էր:
- 126 Արդ ի միւս յառաւօտու
Զայն հրովարտակն որ ահարկու
Առեալ Չաւուշ մի գբրաստու
Տանէր ի շէն Ռեգեստոնու:
- 127 Ուր նա հասեալ վաղվաղակի
Լքսէր Սարգսի չուելն անտի,
Զորմէ գրեալ Դրանն արքունի
Ըսպատէր անդ նոր հրամանի:
- 128 Քանզի Սարգիս յետ առարման
Թըղթոյն իւրոյ նախատական
Եւ առ Պօլիս Կոստանդինեան
Առ մեղկեւ զիւր բան ցասմնական:
- 129 Որ եւ նաւեալ եկաւորի
Ի Բիւզանդիա յիւր հայրենի,
Իբր յայն աւուր երեկոյի,
Յոր իւր վըճիռ տանիւր անտի:
- 130 Սարգիս վճնասուն իւր անտեղեակ
Իջեւանէր առ նուիրակ
Էջմիածնի Սիմոն գերլարգ
Որ եւ յետոյ մեծ Պատրիարգ: